ԲՈԼՈՐՆ
ԻՐԱՎԱՑԻ ԵՆ

PAOLO SORRENTINO

HANNO TUTTI RAGIONE

un romanzo

ՊԱՈԼՈ ՍՈՐԵՆՏԻՆՈ

ԲՈԼՈՐՆ ԻՐԱՎԱՑԻ ԵՆ

վեպ

Թարգմանությունն իտալերենից՝
Լուսինե Շուքուրյանի

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 821.131.1-31 Սորենտինո
ԳՄԴ 84(4Իտ)-44
Ս 771

Ս 771 Սորենտինո Պաոլո
Բոլորն իրավացի են: Վեպ / Պ. Սորենտինո.- Եր.: Newmag, 2024.- 344 էջ:

Տոնի Պագոդան 1980-ականների Իտալիայում հայտնի փոփ աստղ է՝ անհավանական խարիզմայով օժտված տաղանդավոր երգիչ: Փող, թմրանյութեր և կանայք. շռայլ կյանք է վարում Նեապոլում և Կապրիում: Բայց կյանքը բարդանում է, և Տոնին որոշում է փոխել իր կենսակերպը: Շրջագայության ընթացքում Տոնին անհետանում է Բրազիլիայում՝ անցնելով ասկետիկ կյանքի: Բայց 18 տարվա ամազոնյան աքսորից հետո ինչ-որ մեկը պատրաստ է մեծ գումարի չեկ ստորագրել՝ Տոնիին Իտալիա վերադարձնելու համար: Նա ինչպե՞ս կդիմանա իր հին սովորությունների և նոր դարի գայթակղություններին: «Բոլորն իրավացի են» արտասովոր վեպը, որը նոմինացվել է Իտալիայի ամենահեղինակավոր գրական մրցանակին՝ «Ստրեգային», Պաոլո Սորենտինոյի դեբյուտային վեպն է, որն ինչ-որ առումով նաև ինքնակենսագրական է: Այս գիրքն Իտալիայի մասին է և մերօրյա աշխարհի, Տոնիի մասին և յուրաքանչյուրիս:

ՀՏԴ 821.131.1-31 Սորենտինո
ԳՄԴ 84(4Իտ)-44

zangakbookstore.am

ZANGAK BOOKSTORE
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ

ISBN 978-9939-967-31-8
Պաոլո Սորենտինո, «Բոլորն իրավացի են» © 2024, «Նյումեգ» ՍՊԸ
Copyright © 2010 Giangiacomo Feltrinelli Editore, Milano
First published as Hanno Tutti Ragione by Paolo Sorrentino in March 2010 in I Narratori by Giangiacomo Feltrinelli Editore, Milano Italy

Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյումեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Giangiacomo Feltrinelli Editore ընկերության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Նախաբան 11

Վարպետության առաջին դաս՝
գայթակղության վերաբերյալ 75

Երախտագիտության խոսք 341

Նվիրում եմ մորս,
որն այդպես էր մտածում։

Հոգուցդ ձեռք քաշելուն պես
ամեն բան ընթանում է բացարձակ սահուն,
նույնիսկ ամենաանհավանական
քաոսի պայմաններում:
Հենրի Միլլեր

Նախաբանը՝
Միմո Ռեպետոյի

(Գրված իր հարյուրամյակի լուսաբացին)

Ինձ համար յուրաքանչյուր անտանելի բան անուն ունի:
Ես տանել չեմ կարողանում ծերերին: Նրանց թքառատ բերանները: Փնթփնթոցները: Նրանց անօգուտ լինելը:

Առավել վատ է, երբ փորձում են ամեն կերպ օգտակար լինել: Նրանց կախվածությունը:

Նրանց աղմուկը: Բազմաթիվ ու անդադար: Իրենց զավեշտալի ուժասպառ լինելը:

Պատմությունների եսակենտրոնությունը, արհամարհանքը հաջորդ սերունդների նկատմամբ:

Հաջորդ սերունդներին նույնպես տանել չեմ կարողանում:

Տանել չեմ կարողանում ծերերին, որոնք անդադար աղմուկ են բարձրացնում ու ավտոբուսի մեջ անպայման նստելու հավակնություն են ունենում:

Տանել չեմ կարողանում երիտասարդներին: Նրանց ամբարտավանությունը: Սեփական ուժն ու երիտասարդությունը շարունակ մատնացույց անող պահվածքը:

Երիտասարդների՝ հերոսական անպարտելիություն մարմնավորելու մոլուցքը ողորմելի է:

Տանել չեմ կարողանում աներես երիտասարդներին, որոնք ավտոբուսի մեջ իրենց տեղը տարեցներին չեն զիջում:

Տանել չեմ կարողանում ստահակներին ու խուլիգաններին: Նրանց հանկարծակի լկտի ու անօգուտ ծիծաղները: Նրանց քամահրանքը

իրենցից տարբերվող մերձավորի նկատմամբ: Առավել անտանելի են բարի, պատասխանատու ու շռայլ երիտասարդները: Ամեն տեսակ բարեգործություն ու աղոթք: Միաժամանակ այդքան բարեկրթություն ու մահվան հոտ: Նրանց սրտերում ու գլուխների մեջ:

Տանել չեմ կարողանում կամակոր ու եսակենտրոն երեխաներին և միայն իրենց երեխաների վրա կենտրոնացած ծնողներին:

Տանել չեմ կարողանում ճչացող ու լացկան երեխաներին: Իսկ լուռ երեխաներն ինձ անհանգստացնում են, ուստի նրանց ևս տանել չեմ կարողանում: Տանել չեմ կարողանում աշխատողներին, գործազուրկներին ու նրանց աստվածատուր ապերջանկության մաղձոտ և աննախապաշար ցուցամոլությունը:

Այն ամենևին էլ աստվածային չէ, այլ ընդամենը վճռականության բացակայություն:

Ախր, ինչպե՞ս հանդուրժել նրանց, ովքեր նվիրված են պայքարին, պահանջատիրական բարքերին, թեթևաբարո քաղաքական խոսույթին ու թևատակի քրտինքի հոտին: Անհնար է նրանց հանդուրժել:

Տանել չեմ կարողանում մենեջերներին: Ու նույնիսկ կարիք էլ չկա բացատրելու, թե ինչու: Տանել չեմ կարողանում մանր բուժուազիան՝ փակված իրենց կեղտոտ կյանքի խեցու մեջ: Նրանց կյանքի ուղեկիցը վախն է: Վախն այն ամենից, ինչը չի կարող մտնել այդ փոքր խեցու մեջ: Ուստի նրանք սնապարծ են՝ նույնիսկ չիմանալով այդ բառի նշանակությունը:

Տանել չեմ կարողանում նշանված տղաներին, որովհետև շատ տեղ են զբաղեցնում:

Տանել չեմ կարողանում նշանված ընկերուհիներին, որովհետև միջամտում են:

Տանել չեմ կարողանում լայնախոհ, հանդուրժող ու անաչառ մարդկանց: Միշտ իրավացի են:

Միշտ կատարյալ: Միշտ անբասիր: Ամեն ինչ թույլատրվում է, բացի մարդասպանությունից: Նրանց քննադատում ես՝ շնորհակալություն են հայտնում: Արհամարհում ես՝ բարյացակամորեն հայտնում են իրենց երախտագիտությունը: Մի խոսքով՝ դժվար վիճակի մեջ են դնում:

Քանի որ բոյկոտում են չարությունը:

Ուստի անտանելի են:

Հարցնում են՝ ինչպես ես, ու իսկապես ուզում են որպիսությունդ իմանալ: Շո՛կ: Բայց չհետաքրքրված հետաքրքրության ներքո՝ ինչ-որ մի տեղ, մեջքից հարվածներ են հասցնում:

Սակայն տանել չեմ կարողանում նաև նրանց, ովքեր քեզ երբեք դժվար իրավիճակների մեջ չեն գցում: Մ՚իշտ ենթարկվող են և վստահություն ներշնչող: Հավատարիմ ու երկերեսանի:

Տանել չեմ կարողանում բիլիարդ խաղացողներին, մականուններ ունեցողներին, վարանողներին, չծխողներին, սմոգն ու մաքուր օդը, փողոցային վաճառականներին, կտորով վաճառվող պիցցան, քաղաքավարի նախադասությունները, շոկոլադով կրուասանները, խարույկները, արժույթ փոխանակողներին, ծաղկավոր պաստառները, հավասար և միասնական առևտուրը, անկարգությունը, շրջակա միջավայրը պահպանողներին, քաղաքավարության զգացումը, կատուներին, մկներին, ոչ ալկոհոլային խմիչքները, դռան անակնկալ զանգերը, երկարատև հեռախոսազանգերը, այն մարդկանց, որոնք պնդում են, թե օրական մեկ բաժակ գինին լավ է առողջության համար, նրանց, ովքեր ձևացնում են, թե իբր անունդ մոռացել են, ովքեր, ինքնապաշտպանությունից դրդված, ասում են, թե իբր պրոֆեսիոնալներ են, դասարանցիներին, որոնք երեսուն տարի անց քեզ հանդիպում են ու ազգանվամբ են դիմում, այն տարեց մարդկանց, որոնք առիթը բաց չեն թողնում՝ հիշեցնելու, որ իրենք ենք Դիմադրության շարժումը ձեռնարկել, մեծացած ու կյանքին անպատրաստ զավակներին, որոնք պարապությունից արվեստի ցուցասրահ են բացում, նախկին կոմունիստներին, որոնց խելքը գնում է բրազիլական երաժշտության համար, այն թեթևամիտներին, որոնք ասում են *«բանսարկու»,* նորաձևության բնագավառի ներկայացուցիչներին, որոնք ասում են՝ *«թո՛ւյն ա»* ու նման արտահայտություններ, այն քաղցրախոսներին, որոնք ասում են՝ *«սիրունի՛կ», «պուպո՛ւշ», «արտակարգ»,* այն էկումենիկ տիպերին, որոնք բոլորին *«սիրելիս»* են դիմում, որոշ գեղեցկուհիների, որոնք ասում են՝ *«պաշտում եմ քեզ»*, այն բախտավորներին, որոնք լսողությամբ երաժշտական գործիք են նվագում, ամենավերջին ցրվածներին, որոնք, երբ խոսում ես, երբեք չեն լսում, բոլորին քննադատող ինքնահավաններին, ֆեմինիստներին, հանրային տրանսպորտի ամենօրյա ուղևորներին, արհեստական շաքարները, ոճաբաններին, ռեժիսորներին, ավտոմեքենայի ռադիոները, տղամարդ պարողներին, քաղաքական գործիչներին, դահուկի կոշիկները,

դեռահասներին, քարտուղարներին, հանգերը, չափազանց նեղ ջինսերով տարեց ռոք երաժիշտներին, սնապարծ ու չափազանց լուրջ գրողներին, բարեկամներին, ծաղիկները, շիկահերներին, խոնարհումները, որմնադարակները, մտավորականներին, փողոցային արտիստներին, մեդուզաներին, ձեռնածուներին, VIP-երին, բռնաբարողներին, մանկապիղծներին, կրկեսի բոլոր աշխատողներին, մշակույթի ոլորտի աշխատողներին, սոցիալական աշխատողներին, զվարճանքները, կենդանիներ սիրողներին, փողկապները, կեղծ ծիծաղները, հիդրոփայլերը, ամեն տեսակ հավաքորդների. մի քիչ ավելի շատ եմ զզվում ժամացույցի կոլեկցիոներներից, ամեն տեսակ հոբբիներից, բժիշկներից, նրանց հիվանդներից, ջազից, գովազդից, շինարարներից, մամաներից, բասկետբոլի խաղ դիտողներից, բոլոր դերասաններից ու դերասանուհիներից, տեսաարվեստից, Լունապարկերից, ամեն տեսակ փորձարկողներից, ապուրներից, ժամանակակից գեղանկարներից, իրենց արհեստանոցներում գտնվող տարեց արհեստավորներից, սիրողական կիթառահարներից, հրապարակներում տեղադրված արձաններից, ձեռք համբուրելուց, գեղեցկության կենտրոններից, բարետես փիլիսոփաներից, շատ քլորով լողավազաններից, ջրիմուռներից, գողերից, անորեքսիկներից, արձակուրդներից, սիրային նամակներից, քահանաներից ու սարկավագներից, բժշկական մոմիկներից, էթնիկ երաժշտությունից, կեղծ հեղափոխականներից, երկփեղկանի կակղամորթներից, պանդաներից, պզուկներից, հարվածային գործիքներ նվագողներից, վարագույրով ցնցուղներից, բնածին խալերից, կոշտուկներից, կահույքի վրա դրվող արձանիկներից, խլուրդներից, բուսակերներից, բնապատկեր նկարողներից, շպարից, քնարերգուներից, Փարիզի բնակիչներից, բարձր օձիք ունեցող բլուզներից, ռեստորանների երաժշտությունից, խնջույքներից, ժողովներից, գեղեցիկ տեսարան ունեցող տներից, անգլիցիզմներից, նորաբանություններից, պապայի բալաներից, արվեստի զավակներից, հարուստների զավակներից, ուրիշների զավակներից, թանգարաններից, քաղաքապետներից, նահանգային հանձնաժողովի ներկայացուցիչներից, ցուցարարներից, պոեզիայից, երշիկագործներից, ոսկերիչներից, անվտանգության համակարգերից, դեղին ոսկյա շղթաներից, առաջնորդներից, գլուխը կախ հետևողներից, մարմնավաճառներից, չափազանց ցածրահասակ կամ բարձրահասակ մարդկանցից, թաղումներից, մազերից, բջջային

հեռախոսներից, թղթաբանությունից, արվեստի ինստալյացիաներից, բոլոր չափի շարժիչներ ունեցող մեքենաներից, բանալիակալներից, երգահաններից, ճապոնացիներից, մենեջերներից, ռասիստներից ու հանդուրժողներից, կույրերից, մրջյուններից, պղնձից, արույրից, բամբուկից, հեռուստատեսային եթերի խոհարարներից, ամբոխից, արևայրուքի համար նախատեսված կրեմներից, լոբբիներից, ժարգոններից, հետքերից, սիրեկանի հաշվին ապրող սիրուհիներից, առատության եղջյուրներից, կակազողներից, երիտասարդ տարեցներից և տարեց երիտասարդներից, սնափառ մարդկանցից, ռադիկալ շիկի ներկայացուցիչներից, էսթետիկ վիրաբուժությունից, շրջանցիկներից, բույսերից, փափուկ կաշվե կոշիկներից, աղանդավորներից, հեռուստահաղորդավարներից, ազնվականներից, քարկապ ընկնող թելերից, շոուի աղջիկներից, կատակերգուներից, գոլֆ խաղացողներից, գիտաֆանտաստիկ գրականությունից, անասնաբույժներից, մանեկեններից, քաղաքական ապաստարան փնտրողներից, բթամիտներից, ձյունաճերմակ լողափներից, օդից հորինված կրոններից ու դրանց հետևորդներից, ցածրորակ սալիկներից, համառներից, մասնագիտությամբ քննադատներից, այն զույգերից, երբ տղամարդը երիտասարդ է, իսկ կինը՝ տարիքով մեծ կամ հակառակը, հասուն մարդկանցից, գլխարկ կրող բոլոր մարդկանցից, արևային ակնոցով բոլոր մարդկանցից, արևայրուք ապահովող բոլոր լամպերից, հրդեհներից, ապարանջաններից, մեջք ունեցողներից, զինվորականներից, ցրված թենիս խաղացողներից, երկրպագուներից, ծխախոտի կրպակի հոտից, հարսանիքներից, անեկդոտներից, առաջին սուրբ հաղորդությունից, մասոններից, ժամերգությունից, սուլող մարդկանցից, հանպատրաստի երգողներից, բխկոցներից, հերոինամոլներից, Lion’s Club-երից, կոկաինամոլներից, Rotary ակումբներից, սեռական տուրիզմից, տուրիզմից, տուրիզմից զզվողներից, որոնք պնդում են, թե իրենք *«ճամփորդներ»* են, մարդիկ, որոնք խոսում են՝ *«սեփական փորձից ելնելով»*, նրանցից, ովքեր փորձ չունեն, բայց, միևնույն է, խոսում են, այս աշխարհից գլուխ հանողներից, տարրական դասարանների ուսուցչուհիներից, հավաքույթների համար խենթացողներից, հիվանդներից, սանդալներ հագնող բուժքույրերից: Բայց ինչո՞ւ պետք է անպայման սանդալներ հագնեն:

Տանել չեմ կարողանում ամոթխածներին, շաղակրատներին, անտաշներին, կեղծ խորհրդավորություն ունեցող մարդկանց, խելքը թռցրածներին,